

## ԵՍ ԵՐԳԵԼՈՎ Կ՛ՈՒՉԵՄ ՄԵՌՆԻԼ

Ա

Մպասումիս և Հույսիս Քաղցրությանը հետ մինակ էի այդ իրիկուն,  
Եվ Փրկության ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը կը կշռեի...  
Երբ՝ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին մեջեն, ուժգնապես  
բախեցին.

Եվ ժպտուն՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն գեղեցիկ, եղբայրադեմ և  
ահավոր...

Բ

Երիտասարդ էր: Աչվըներուն կայծը երկնքի աստղերեն էր որ կը ծորեր,  
Եվ հասակին ձևերը մարմարներու գորություններեն էր կերտված...  
Մտածումը մարդկային արդարության էջերեն հստակորեն ջահավառյալ...  
ճակտին վրա իրենց ցավի և բարության ծաղկներն ունեին:

Գ

Մտերմաբար քով քովի, Հայրենիքին տառապանքեն կը խոսեինք,  
Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ սրտին կը  
նմաներ...

Նայվածքները նայվածքներուս մեջ, նույն ճակատագրին խորհրդանիշը  
փնտռեցին...

Եվ մեր տրտում ժպիտները հոգիե հոգի մեղմորեն ճառագայթվեցան:

Դ

Ժամերով լռին էր: Լռին էի: Հիշատակի հեծեծանքներ մեր աչքերը  
թրջեցին...

Եվ լամպարիս կապույտ լույսը, սեղանիս վրան, այլևս արյուններու նման  
վար կը թորար...

Դժգունեցա ես՝ ինչպես երազ մը որ առավոտին երևումեն կ'անհետի...

Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին մեջ՝ ոտքի՝ ինձի ըսավ...

Ե

- "Այս իրիկուն՝ հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,

Երիվարս թամբած եմ արդեն՝ և կյանքի ու կռվի տենդեն՝ դուռիդ առջևը կը վրնջե...

Եվ տե՛ս հասակես վար անբիծ սուրս մերկ է, մերկությամբը գերմարդկային վճիռներուն:

Ճակատդ շրթունքիս մոտեցո՛ւր... հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր:

Զ

"Եվ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծե,

Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.

Ես որք մըն եմ և ըմբոստ մը, մնա՛ս բարյավ, կորուսյալներս փնտռելո՛ւ կ'երթամ...

Քու երգերեդ երգ մը տուր ինձ, երգ մը, ես երգելո՛ւ կ'ուզեմ մեռնիլ...":

**Միամանթո**